ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
30.01.2023 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
***ԽԱԼԴ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿ.ԿԱԶՄԱԿԵՐ***
հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

| | | |
|---|---|---|
| **1. Հասարակական կազմակերպության՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | ԽԱԼԴ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿ.ԿԱԶՄԱԿԵՐ |
| 1.2 ՀՎՀՀ-ն | | 02236895 |
| 1.3 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ Արարատյան 53 |
| 1.4 Պետական գրանցման համարը | | 211.171.03017 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2005-01-27 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)10429242 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | www.azdarar.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | pavlik_m_a_@live.com |
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
| Անունը | Ազգանունը | Պաշտոնը |
| Կարապետ | Տերպետրոսյան | Տնօրեն |
| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը | | |
| Հոդված 2.Կազմակերպության նպատակներն ու խնդիրները 2.1. Կազմակերպության հիմնական նպատակներն են. | | |
| Գկոբալ Էթիկայի գաղափարների մասայականացում և տարածում | | |
| Համահունչ դարձնել կրթական համակարգի ծրագրերը և մակարդակը գիտության նվաճումների և նորագույն տեխնոլոգիաների տված հնարավորություններին | | |
| Մշակել նոր ձևեր և մեթոդներ հասարակական կյանքի երեք ուժերի միջև. պետական ֆինանսատնտեսական հասարակական կոնստրուկտիվ փոխներգործության և փոխշահավետ համագործակցության եզրեր ստեղծելու համար | | |
| Իր նպատակների իրականացման համար միջոցներ հայթայթելու նպատակով օրենսդրությամբ նախատեսված կարգով կազմակերպել ամենատարբեր տեսակի և մասշտաբի միջոցառումներ ինչպես Հայաստանի Հանրապետությունում այնպես էլ արտերկրում | | |
| Ստեղծել տնտեսական ընկերություններ և նրանց միջոցով իրականացնել տարբեր բնույթի ձեռնարկատիրական գործունեություն որից ստացված միջոցները ամբողջությամբ կուղղվեն կազմակերպության նպատակներին | | |
| իր խնդիրների և նպատակների իրականացման համար իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն | | |
| **4 Հասարակական կազմակերպության՝** | | |
| 4.1 Անդամների թիվը | | 2 |
| 4.2 Կամավորների թիվը | | |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | | 0 |

**6. Իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | Խնամքի միջացներով աջակցություն հատուկ դպրոցներին | ք.Երևան, Մամիկոնյանց 31 տես. թեր. դպրոց | Աջակցություն խնամքի միջոցներով տես. թերություն ունեցող երեխաներին | Ավարտված |
| 2 | Խնամքի միջացներով աջակցություն հատուկ դպրոցներին | ք.Երևան,Վարդա շեն 6-րդ փ.68/2 շ. հատուկ դպրոց | Աջակցություն խնամքի միջոցներով առողջական թերություն ունեցող երեխաներին | Ավարտված |
| 3 | Խնամքի միջացներով աջակցություն հատուկ դպրոցներին | ք. Երևան, Նոր Նորք,Մոլդավական փ. 41շ. հատուկ դպրոց | Աջակցություն խնամքի միջոցներով առողջական թերություն ունեցող երեխաներին | Ավարտված |

Digitally signed by MELKONYAN ARGINE 5612840527
Date: 2023.05.31 01:00:36 AMT

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Խնամքի միջացներով աջակցություն հատուկ դպրոցներին | ք. Երևան, Նորք Մարաշ Այգիներ 193շ. հատուկ դպրոց | Աջակցություն խնամքի միջոցներով առողջական թերություն ունեցող երեխաներին | Ավարտված |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | |
| 8.2 Գույքը | 313,989 |
| Ընդամենը | 313,989 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | | |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 0 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 313,989 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 313,989 |

**11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝**

| | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 0 |

**12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝**

| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
|---|---|---|---|
| 1 | | | |
| Ընդամենը | | 0 | |

Նշումներ

Բարեգործություն կրթական և այլ հասարակական կազմակերպություններին-103190 դրամ, օֆիսի ընթացիկ վերանորոգման ծասեր-210799 դրամ:

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____0_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

## ՀՈԴՎԱԾ 3.

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Կազմակերպության գործունեության առարկան է՝

### 3.1 .ՍՈՑԻԱԼ – ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈԼՈՐՏ

- Իրավունքի,սոցիալական ոլորտների, կրթության, էմիգրացիոն հարցերի, աշխատանքի տեղավորման,ապահովագրման արդի միջազգային պրոբլեմները. ուսումնասիրում և ուսումնասիրությունների արդյունքների տրամադրում այդ ոլորտներում աշխատող պետական և հասարակական կազմակերպություններին, զանգվածային լրատվամիջոցներին, ինչպես նաև լայն հասարակայնությանը՝ կազմակերպելով սեմինարներ ,հրատարակելով գրքույկներ՝ հետագայում այդ ուսումնասիրությունների արդյունքները գործնականում օգտագործելու համար:

### 3.2. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՈԼՈՐՏ .

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

- Օրենսդրական նախագծերի մշակում և օրինականացում սոցիալական քաղաքականության և օրենսդրական այն ոլորտներում, որոնք առընչվում կամ վերաբերում են բարեգործական գործունեությանը :
  Գտնել ճանապարհներ և ձևեր՝ փոխելու համար պետության վերաբերմունքը բարեգործական կազմակերպությունների հանդեպ, փոխել նրանց հանդեպ ունեցած բիզնես-սեկտորի մոտեցումը: Մշակել նոր ձևեր և մեթոդներ հասարակական կյանքի երեք ուժերի / պետական, ֆինանսա-տնտեսական, հասարակական /միջև կոնստրուկտիվ փոխներգործության և փոխշահավետ համագործակցության եզրեր ստեղծելու համար, որպեսզի համընդհանուր

ջանքերով լուծվեն սոցիալապես առավել կարևոր պրոբլեմները , և Հայաստանում ստեղծվի այնպիսի օրենսդրական դաշտ, որը խթան կհանդիսանա բարեգործության զարգացմանը և նոր բարեգործական ֆոնդերի ստեղծմանը:

- **Բարեգործությունը և իրավական դաշտը համաշխարհային պրակտիկայում.** պետական մոտեցումները և պետության քաղաքականությունը բարեգործական գործունեությունը քաջալերելու և խրախուսելու գործընթացներում համաշխարհային փորձի ուսումնասիրում և պրոպագանդում :

- **,, Բարեգործությունը Հայաստանում ,,** ամենամյա գիտաժողովների, սեմինարների և դասախոսությունների կազմակերպում , հետազոտությունների արդյունքների հրապարակում:

- **,, Բարեգործությունը և օրենսդրական դաշտը Հայաստանում ,,** հետազոտությունների և գիտաժողովների կազմակերպում, ստացված արդյունքների հրապարակում:

- **Տեղեկատվական ծառայության ստեղծում.** որը հնարավորություն կտա սպառիչ տվյալներ տրամադրել բարեգործական գործունեության ցանկացած ոլորտների և բարեգործական օգնության կարիքը զգացող սոցիալական խմբերի, հասարակական կառույցների,առանձին ընտանիքների և անհատ անձերի մասին:

- **Բարեգործության ֆինանսավորման նոր ձևերի մշակում դրանց օրինականացումը օրենսդիր մարմինների միջոցով:**

- **Աջակցություն Հայաստանում կենսունակ բարեգործական կազմակերպությունների ձևավորմանը.** իրավաբանական, ֆինանսա-տնտեսական, կազմակերպչական հարցերի խորհրդատվությամբ, ինչպես նաև կազմակերպելով սեմինարներ, ուսուցողական ծրագրեր և արտասահմանյան գործուղումներ՝ փորձի փոխանակման նպատակներով:

- **Արտերկրում և Հայաստանում գործող բարեգործական կազմակերպությունների միջև գործնական կապերի ստեղծում** նպատակ ունենալով համահունչ դարձնել հայկական բարեգործական կազմակերպոիթյունների ջանքերը նույնատիպ ծրագրեր և նպատակներ հետապնդող եվրոպական և ամերիկյան կազմակերպությունների հետ՝ նպաստելով արևելքի և արևմուտքի գործնական կապերի զարգացմանը:

## 3.3. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈԼՈՐՏ

- «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ » հատուկ մշակված ծրագրերով դասագրքերի հրատարակում և դասընթացների կազմակերպում:

Ա. «Երիտասարդ սերունդը հանուն շրջակա միջավայրի»

ուսումնական և գործնական ծրագրերի իրականացում՝ կապված նշված ոլորտում ուսումնական ծրագրեր, դասագրքեր և պրոֆեսիոնալ կադրեր պատրաստելու խնդիրների հետ:

Բ. «Շրջակա միջավայրի պաշտպանությունը»
ֆիլմաֆոնդի ստեղծում WWF –ի / Բնության պաշտպանության համաշխարհային ֆոնդ / և ՍԱԿ-ի «Շրջակա միջավայրի պաշտպանության ծրագրեր» - ի շրջանակներում նկարահանված ֆիլմերի բազայի հիման վրա՝ նպատակ ունենալով շրջակա միջավայրի վիճակի և աշխարհի բնական ռեսուրսների մասին տեղեկությունների և գիտելիքների մասսայականացումը: Օգտագործելով մասսայական կոմունիկացիայի էլեկտրոնային միջոցները՝ տրամադրել նյութեր դպրոցներին և ուսումնական հաստատություններին:

- «ԳԵՈԷԿՈՆՈՄԻԿԱ „
  Ծրագրում՝
  Ա. „Գեոէկոնոմիկան և Հայաստանը„
  ամենամյա գիտաժողովի կազմակերպում,

  Բ. „Համաշխարհային գեոէկոնոմիկայի նոր քարտեզը„

  Գ. „ Արդի Հայաստանի գեոէկոնոմիկան „
  ծրագրերի շրջանակներում կուսումնասիրվեն Հայաստանի տնտեսությունն ու էկոնոմիկան, տարածաշրջանում առկա և ապագա մրցակցության ասպեկտները և Հայաստանի՝ որպես մրցակցի, հնարավորությունները:

- „ ԳԼՈԲԱԼ ԷԹԻԿԱ „
  Ծրագիրը նախատեսում է գլոբալ էթիկայի գաղափարների մասսայականացում և տարածում: Ծրագրի հիմքում ընկած է 1993 թ. համաշխարհային կրոնների պառլամենտի կողմից ընդունված դեկլարացիան գլոբալ էթիկայի սկզբունքների վերաբերյալ/ մասնավորապես այն ընդգրկում է իր մեջ այնպիսի գաղափարներ, ինչպիսին են հարգանքը մարդու կյանքի հանդեպ, չբռնանալու կուլտուրան, հանդուրժողականությունը, օրինավոր և առաքինի կյանքի կուլտուրան, կնոջ և տղամարդու միջև հավասար իրավունքների և պարտականությունների մոտեցումը :

## 3.4. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Դասընթացների, սեմինարների, միջազգային սիմպոզիումների կազմակերպում:

- Արտասահմանյան գիտնականների նորագույն աշխատանքների հրատարակում
  նպատակ հետապնդելով մոտեցնել կրթական համակարգի ծրագրերը և մակարդակը գիտության նվաճումների և նորագույն տեխնոլոգիաների տված հնարավորություններից բխող նպատակներին: Հասնել նրան, որ նոր սերունդը հստակ պատկերացում ունենա, թե ինչ նպատակներ է դնում իր առջև արդի գիտությունը և ինչպես են գիտության այս կամ այն նվաճումները արտահայտվում հասարակական կյանքում և ազդում հասարակության զարգացման վրա:

- Օգնություն կանանց բարձրագույն ուսում ստանալու հարցերում
  աջակցություն գիտական աստիճաններ ունեցող կանանց գիտական հետազոտությունների և ստեղծագործական աշխատանքների իրականացման գործընթացներում, գիտական աշխատությունների և ստեղծագործությունների

պրոպոգանդում և մասսայականացում: Համագործակցություն բոլոր նմանատիպ ուղղվածություն ունեցող հայաստանյան և արտասահմանյան պետական և հասարակական կազմակերպությունների հետ:

- Աջակցություն արտերկրում և Հայաստանում գործող համալսարանների և այլ ուսումնական հաստատությունների միջև կայուն և գործնական կապերի ստեղծման խնդիրներում:

- Աջակցություն նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների ներդրման և օգտագործման գործընթացներում
  սկսնակ ժուռնալիստների ուսուցման դասընթացների կազմակերպում, աջակցություն գործող ժուռնալիստներին Օքսֆորդի, Ստենֆորդի, Բորդոյի և Կալիֆորնիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական ավելի բարձր ուսում ստանալու խնդիրներում :

- „Մուլտիմեդիա „
  Ծրագիրը նախատեսում է խորհրդատվություն և աջակցություն հրատարակչություններին նոր / թվային/ տեխնոլոգիաներին անցնելու, ինչպես նաև բարձր որակի տեղեկատվական և լրատվական կենտրոնների ստեղծման խնդիրներում : Ծրագիրը ենթադրում է նաև աջակցություն համակարգչային ռեսուրսներից օգտվելու, ինտերնետում նյութեր տեղադրելու և ինտերնետից օգտվելու, CD-ROM-եր, սայթեր պատրաստելու, էլեկտրոնային / համակարգչային/ հրապարակումներ ստեղծելու և մուլտիմեդիայի այլ միջոցներից օգտվելու հարցերում :

- Արտերկրում սովորելու, որակավորումը բարձրացնելու միջազգային ծրագրերի և հնարավորությունների մասին տեղեկատվական, խորհրդատվական , կազմակերպչական և կոորդինացիոն աշխատանքների իրականացում:

- Հայաստանի, ԱՄՆ-ի և Եվրոպական երկրների բարեգործական և կրթական համակարգերի, կազմակերպությունների միջև գործնական կապերի հաստատում:

- Գործազուրկների ուսուցում և աջակցություն աշխատանք գտնելու հարցերում:

- Որակավորման բարձրացման ուսումնական կենտրոնների ստեղծում:

## 3.5. ՄՇԱԿՈՒՅԹ

- „Ինտերմշակույթ „
  համերգների,փառատոնների, ցուցահանդեսների, CD –ների ստեղծմամբ, հրատարակչական գործունեությամբ՝ աշխատելով ազգային և միջազգային շրջանակներում, համագործակցելով պետական և հասարակական կառույցների հետ, կազմակերպելով սեմինարներ,սիմպոզիումներ, նպաստել հայ մշակույթի և հոգևոր ժառանգության տարածմանն ու ճիշտ ըմբռնմանը արտասահմանում:

- „ Համագործակցություն և փոխանակում „
  Դասական երաժշտության փոխադարձ համերգների կազմակերպում

Հայաստանում և արտերկրում:

- **Սեփական հեռուստաալիքի /հեռուստահաղորդումների/ , ռադիոկայանի /ռադիոհաղորդումների/, տեսաֆիլմերի և ձայնագրման ստուդիաների ստեղծում . կանոնադրությամբ նախատեսված ծրագրերը իրականացնելու և պրոպոգանդելու համար:**

3.6. Իրականացնել ՀՀ օրենսդրությանը և սույն կանոնադրությանը չհակասող այլ գործունեություն:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 31.05.2023 00:57